ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

31.07.2019
342-69

ՀՀ Ազգային ժողովի նախագահ
պարոն Արարատ Միրզոյանին

# Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Միրզոյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել քաղաքացի Գայանե Գասոյանը և խնդրել աջակցել իրեն տեղեկատվություն ստանալու հարցում: 2019 թ.-ի հուլիսի 18-ին Գայանե Գասոյանը տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել էր ՀՀ Ազգային ժողով և մինչև օրս պատասխան չի ստացել:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ հոգուց է բաղկացած ԱՄՆ մեկնած ԱԺ նախագահի պատվիրակությունը: Խնդրում եմ նշել նաև ուղեկցող անձանց՝ օգնական, թիկնապահ, խոսնակ և այլն,
2. Որքա՞ն է ծախսվել պետական բյուջեի միջոցներից այս ուղևորության նպատակով: Խնդրում եմ նշել ծախսերը ճանապարհածախսի, գիշերակացի և օրապահիկի համար առանձնացված,
3. Ինչո՞ւ է պաշտոնական այցի տևողությունը մոտ 10 օր:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան